

1. ԱՎԱՆԴԱՆՈՒՄ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ ^{2,3}

1.1. Բանկում Ավանդ ներդնելու համար հաճախորդը, ելնելով իրավաբանական կարգավիճակից, ներկայացնում է.

1.1.1. Իրավաբանական անձի դեպքում՝

- կանոնադրություն,
- համապատասխան կազմակերպա-իրավական տեսակի իրավաբանական անձանց կամ հիմնարկի համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմնադիր ժողովի արձանագրություն (եթե բաժնետերերի, բաժնեմասերի և նրանց մասին այլ տվյալների տեղեկատվությունը բացակայում է կանոնադրությունում),
- իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից տրված գրանցման վկայական,
- ՀՎՀՀ (հարկային կոդ),
- քաղվածքներ ղեկավար անձանց նշանակման մասին հրամաններից կամ որոշումներից (եթե տնօրենը գրանցված է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից հաճախորդին տրված գրանցման վկայականում, ապա նրա նշանակման հրամանը չի պահանջվում),
- ղեկավար անձանց անձնագրերը (ովքեր կարող են հանդիսանալ հաշվի կարգադրիչ),
- տեղեկություններ բաժնետերերի, մասնակիցների մասին (եթե բացակայում է կանոնադրությունում), ընդ որում՝ ա/ բաժնետերերի, մասնակիցների ֆիզիկական անձ լինելու դեպքում՝
տեղեկություն բաժնեմասերի չափի մասին, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, գրանցման հասցեն, հեռախոսի համարը, բ/ բաժնետերերի, մասնակիցների իրավաբանական անձ լինելու դեպքում՝ կազմակերպության կանոնադրությունը, հարկային կոդը, իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից տրված գրանցման վկայականը (բաց բաժնետիրական ընկերություն լինելու դեպքում պահանջվում են տեղեկություններ 5%-ից ավել բաժնեմաս ունեցող բաժնետերերի համար),

- Ստորագրությունների նմուշների քարտ (ձևաթուղթը տրամադրվում է Բանկի կողմից), որը գրանցվում է միայն Բանկում:

1.1.2. Ֆիզիկական անձի (երեխաների անունով կուտակային ավանդի դեպքում՝ օրինական ներկայացուցչի) դեպքում՝

- անձնագիր,
- Առկայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ,
- երեխաների անունով կուտակային բանկային ավանդի դեպքում՝ նաև ավանդատուի ծննդյան վկայականը կամ անձնագիրը,
- «Գտնված երագ» ավանդի դեպքում նաև կենսաթոշակատու լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը /ծերության նպաստ ստացող անձի դեպքում պարտադիր չէ հավաստող փաստաթղթի առկայությունը/:

1.1.3. Անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝

- իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից տրված գրանցման վկայական.
- ՀՎՀՀ (հարկային կոդ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- Ստորագրությունների նմուշների քարտ (ձևաթուղթը տրամադրվում է Բանկի կողմից), որը գրանցվում է միայն Բանկում և չի ներկայացվում հարկային մարմնին:

1.1.4. Բացի 1.1.1-1.1.3 ենթակետերով սահմանված տեղեկություններից, ներդրվող Ավանդի գումարը, ինչպես նաև նախկինում ներդրված գործող Ավանդների և տվյալ պահին ներդրվող Ավանդի հանրագումարը 5 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցելու դեպքում՝

- եթե ավանդատուն հաշվետեր է, և նրա իրավաբանական գործում առկա են եկամտի աղբյուրը հավաստող փաստաթղթեր, ապա որևէ լրացուցիչ փաստաթուղթ չի պահանջվում.
- եթե ավանդատուն հաշվետեր չէ, ապա նրանից պահանջվում են նաև գումարի ծագման աղբյուրը հավաստող փաստաթղթեր և/կամ հայտարարագիր ֆինանսական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ:

² Վերոնշյալ փաստաթղթերը չեն պահանջվում Բանկի հաշվետեր հաճախորդներից, որոնց իրավաբանական գործում առկա են հաշիվների բացման և վարման կարգով պահանջվող փաստաթղթերը և ֆինանսական միջոցների ծագման աղբյուրը հավաստող հիմնավորումները:

³ Ոչ ռեզիդենտ հաճախորդների կողմից ներկայացված փաստաթղթերը անգլերեն կամ ռուսերեն լեզուներով չլինելու դեպքում պահանջվում է դրանց ապոստիլիզացված կամ նոտարական վավերացմամբ թարգմանությունը վերը նշված լեզուներով: